

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՍՈՆԱ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Նախադասության խոսքային կոնկրետ դրսևորումները (համառոտ կամ ընդարձակ) հանդես են գալիս իրենց լրիվ կամ թերի տարբերակներով: Նախադասության թերիությունը նրա կառուցվածքային այս կամ այն բաղադրիչի (կամ բաղադրիչների) զեղչմամբ է պայմանավորվում:

Հայերենի շարահյուսագիտության մեջ բավական լավ ուսումնասիրված են թերի նախադասությունները¹: Հենվելով շարահյուսագիտական նվաճումների ու լեզվական նյութի մեր ուսումնասիրության վրա՝ ստորև որքան հնարավոր է ամբողջական ու մանրամասն կներկայացնենք ստորոգյալի մասնակի զեղչումով թերի նախադասության ընդհանուր պատկերը արդի հայերենում:

Նախադասության անդամի զեղչումը ծավալային առումով լինում է երկու տեսակ՝ լրիվ և մասնակի: Լրիվ զեղչման դեպքում նախադասության անդամը իր բառային ամբողջ արտահայտությամբ է բաց թողնվում, իսկ մասնակի զեղչման դեպքում՝ նրա արտահայտության բաղադրիչ մի մասը: Ահա նման դեպքերում ունենում ենք մասնակի զեղչումով թերի նախադասություն: Օրինակ՝ «Ժամանակները խառն են ու խրթին [են]» (Հ. Սահյան, Կանչե, կռունկ, Երևան, 1973, էջ 21)²: «Եվ ահա կրկին ցավոտ մի թախիժ Գալիս է անտես ու ինձ ողողում [է]» (Վ. Դավթյան, Երկեր, հ. 1, Երևան, 1985, էջ 126): «Ելել [է], կանգնել է գարնան գարթոնքի դեմ գեղեցիկ, Բահր խրել [է] հողի մեջ, սրբել [է], սրբել [է] քրտինքը մաքուր, Ասել է. «Լույս եղիցի» (նույն տեղում, էջ 216):

Նախադասության անդամը մասնակիորեն է զեղչվում, երբ այն արտահայտվում է կա՛մ ձևաբանորեն, կա՛մ շարահյուսորեն վերլուծական եղանակով, այն է՝ ձևավորվում է կա՛մ բաղադրյալ բառաձևով (օրինակ՝ «գնում է», «գնացած կլինի» և այլն), կա՛մ շարահյուսական առումով բաղադրյալ (վերլուծական) անդամ է՝ ձևավորված երկու կամ ավելի բառերի (բառաձևերի) շարահյուսական միասնությամբ (օրինակ՝ բառակապակ-

¹ Վ. Առաքելյան ն. Հայերենի շարահյուսություն, հ. 2, Երևան, 1964, էջ 58–81, Ս. Արբախյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու, հ. Բ, Երևան, 1975, էջ 293–303, Ս. Արբախյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բադիկյան. Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 445–458, Ռ. Բշխանյան. Արդի հայերենի շարահյուսություն: Պարզ նախադասություն, Երևան, 1986, էջ 296–299, Ս. Գյուլբերդյան. Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն (պարզ նախադասություն), Երևան, 1988, էջ 236–241, Ս. Արբախյան. Հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 51–55, Ա. Պապոյան. Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ: Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 44, 58 և այլն:

² Անկյունավոր փակագծերով նշում ենք զեղչված մասը:

ցություններով, կապային կառույցներով, ստորոգելիով ու հանգույցով և այլն):

Մասնակի գեղջմամբ գործածվում են նախադասության տարբեր անդամներ՝ թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական: Առավել հաճախ գործածվում է ստորոգյալը: Հասկանալի է՝ ստորոգյալը մասնակի գեղջմամբ կարող է գործածվել, եթե այն վերլուծական բառաձևով է արտահայտվում՝ «ձևակազմիչ կամ հիմքակազմիչ դերբայ + եմ կամ լինել օժանդակ բայ» կաղապարով («սովորում է», «սովորած կլինի» և այլն), կամ կազմությամբ բաղադրյալ ստորոգյալ է (բայական բաղադրյալ՝ «կարողացավ հասցնել», «շարունակեց օգնել» և այլն, անվանաբայական՝ «թեթև է», «հեշտ է երևում» և այլն, բայական ու անվանաբայական բաղադրյալ ստորոգյալների համակցմամբ՝ «պատրաստ է օգնել» և այլն):

Հանրահայտ է, որ ստորոգյալը մասնակիորեն հաճախ գեղջված է լինում, երբ բառային արտահայտություն չի ստանում պարզ ստորոգյալի «եմ» օժանդակ բայը կամ անվանաբայական ստորոգյալի «եմ» հանգույցը: Այդպես է լինում սովորաբար բարդ համադասական նախադասության տարենթակա կամ ընդհանուր ենթակայով բաղադրիչներից մեկում կամ մյուսում («եմ» բայը դրանց տարբեր ստորոգյալներում ժամանակային նույն իմաստով է լինում): Դրանով բառագործածության խնայողություն է լինում, և խոսքի հաղորդակցական ոճը՝ ավելի ընդունելի: Օրինակ՝ «Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ [է], ազգեր, սերունդներ՝ անցնող քարավան [եմ]» (Ալ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1974, էջ 61), «Հեքիաթը անվերջ օրորում [է], Իլիկը խոսում է անուշ» (Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1956, էջ 289), «Երկնի՛ր, իմ երկի՛ր, հավատով անմար. Սուրբ է քո ուղին, և պսակըդ՝ վեհ [է]...» (Վ. Տերյան, նշվ. երկը, էջ 297): «Ինչպե՛ս ես դու, մեղվի նման, անգամ թույնից Նեկտար քաղել, մեղր [եմ] քամել դառնությունից...» (Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972, էջ 154):

«Եմ» օժանդակ բայը կարող է գեղջվել անվանաբայական ստորոգյալի կազմում հանգույցի դերով հանդես եկող «թվալ», «դառնալ», «լինել», «կոչվել» և այլ բայերի դիմավոր ձևերում: Օրինակ՝ «Դարձել է աշխարքն, ա՛խպեր, առ ու փախ, Մերը դարձել [է] սուր ու ջուրը–արին ...» (Հ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 162): «Ինչ եղել եմ, եղել [եմ], Միայն չասեք, թե ես Ավելորդ եմ եղել» (Հ. Սահյան, նշվ. երկը, էջ 352):

«Եմ» օժանդակ բայը կամ հանգույցը գեղջվում է, երբ ստորոգյալը կրկնվում է նույնությամբ, որով նրա իմաստը հաղորդման մեջ ընդգծվում, կարևորվում է, կամ գործողության կատարման տևականություն է արտահայտվում³: Օրինակ՝ «Կանչում է կրրկին, կանչում [է] անդադար էն չրքնաղ երկրի կարոտը անքուն, Ու թևերն ահա փրոած տիրաբար՝ Թրոչում է հոգիս, թրոչում [է] դեպի տուն» (Հ. Թումանյան, նշվ. երկը, էջ 168): «Գնում էիր, գնում [էիր], գնում [էիր], Չէիր տեսնում ոտքերիդ տակ խարակներն ու խուրճն աշխարհի» (Հ. Սահյան, նշվ. երկը, էջ 362): «Մերի՛կ, ա՛խ մերիկ, Ոտիկս է ցավում, Այս ճամփան՝ ավագ, Այս ճամփան

³ Ս. Գյուրբուրդյան, նշվ. աշխ., էջ 79:

փուշ է, Ու ծարավ եմ ես, Ծարավ փուշ եմ, Ծարավ [եմ]...» (Վ. Դավթյան, Երկեր, հ. 2, Երևան, 1985, էջ 360):

Խոսակցական լեզվում նմանօրինակ շարահյուսական կրկնության ժամանակ, պատահում է, դերբայը կամ ստորոգելին է գեղջվում և ոչ թե □եմ□ բայը: Օրինակ՝ «Ես ձեր պատուհանից ներս չեմ նայի երբեք, Ես չեմ [անցնի], ես չեմ անցնի ձեր փողոցով անգամ...» (Ս. Կապուտիկյան, Յոթ տասնյակ տարի, Երևան, 2004, էջ 63):

«Եմ» բայը կարող է չգեղջվել ոճական-արտահայտչական նպատակով: Օրինակ՝ «Ռոփու՛մ են, դոփու՛մ են, դոփու՛մ են, Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը, պայտերը խփում են, խփում են հողին» (Ե. Չարենց, Երկեր, Երևան, 1983, էջ 91): «Բրո՛նզ ես, հու՛ր ես, Բրոնզե սու՛ր ես, Բրոնզե փառք ես, Բրոնզե փայլ» (նույն տեղում, էջ 56):

Բանաստեղծական խոսքում հաճախ է հանդիպում սրա հակադիր պատկերը, այսինքն՝ բարդ համադասական նախադասության բոլոր բաղադրիչներում «եմ» բայը ոճական-արտահայտչական նպատակով կարող է գեղջված լինել: Օրինակ՝ «Է՛յ, ջան-հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես, Մարերդ կորած երկնի մովի մեջ, Ջրերդ անուշ, հովերդ անու՛շ, Մենակ բալեքդ արուն-ծովի մեջ» (Ավ. Իսահակյան, նշվ. երկը, էջ 126), «Մայրս փոքրիկ, մայրս խեղճ, Մայրս մի մայր հասարակ, Մայրս այս մայր երկրի մեջ՝ Արևի դեմ մի ճրագ» (Հ. Շիրագ, Քնար Հայաստանի, Երևան, 2000, էջ 104): «Հների մեջ՝ դու ալեհեր, Նորերի մեջ՝ նոր ու ջահել. Դու՛ խաղողի խյմարված վագ, Վշտերդ՝ ջուր, ինքդ ավագ...» (Պ. Սևակ, նշվ. երկը, էջ 152): «Մայրենի լեզու, Դու՛ ողի, դու՛ հաց, Դու՛ անգուգակից, դու՛ միակ աստված, Որ աստծո նման գոհ է պահանջում» (Վ. Դավթյան, նշվ. երկը, հ. 2, էջ 9):

Մասնակի գեղջում է լինում, երբ «լինել» բայը (նաև «դառնալ», «թվալ», «կոչվել»-ն այլն) իբրև անվանաբայական ստորոգյալի հանգույց է գործածվում, այսինքն՝ բաց է թողնվում կա՛մ ամբողջ հանգույցը, կա՛մ վերջինիս դիմավոր ձևի «եմ» օժանդակ բայը: Օրինակ՝ «Խոսքդ պիտի լինի դաշու յն, սիրտդ՝ [պիտի լինի] կրակ ահավոր...» (Վ. Տերյան, նշվ. երկը, էջ 323): «Մի տեղ իշխան [եմ եղել] ու տեր [եմ եղել], Մի տեղ համեստ հովիվ [եմ եղել], Մի տեղ ճորտ եմ եղել, Մեկին մոտ-մտերիմ [եմ եղել], Մեկին հազիվ ծանոթ [եմ եղել], Մեկին խորթ եմ եղել...» (Հ. Սահյան, նշվ. երկը, էջ 352): «Ու դարձավ նա լուռ, [դարձավ] դալու կ, [դարձավ] մտախոհ...» (Հ. Թումանյան, նշվ. երկը, էջ 252), «Եվ կյանքըս բոլոր երկարատև նինջ Թվաց հոգուս, մի տխուր երագ [թվաց]» (Վ. Տերյան, նշվ. երկը, էջ 151): «Քեզ քաջ են կոչել, կոչել են տկար, Բայց ոչ... տիրակալ [կոչել]» (Պ. Սևակ, նշվ. երկը, էջ 156):

«Լինել» հանգույցը նույնությամբ (առանց լրիվ կամ մասնակի գեղջման) կարող է կրկնվել բարդ համադասական նախադասության ամեն մի բաղադրիչում: Օրինակ՝ «Ես և բարձր եմ եղել, Եվ իշխան եմ եղել, իմ երագի նման, Եվ իմ անցած երկար ճանապարհի նման Խորդուբորդ եմ եղել» (Հ. Սահյան, նշվ. երկը, էջ 352):

Ստորոգյալի մասնակի գեղջման դրսևորումներից մեկն էլ կապվում է բայական բաղադրյալ ստորոգյալի ձևավորման հետ: Նկատի ունենք ոչ

թե նրանում «եւ» օժանդակ բայի, այլ եղանակիչ կամ կերպավորիչ բայի կամ հիմնական բաղադրիչի՝ անորոշ դերբայի զեղչումը: Բայական բաղադրյալ ստորոգյալի եղանակիչ կամ կերպավորիչ մասը սովորաբար զեղչվում է, երբ այն նույնն է լինում ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասության բաղադրիչներում: Օրինակ՝ «Հա՛մ ջահել մնալ ես ուզում, Հա՛մ [ուզում ես] դառնալ իմաստուն ծերուկ» (Պ. Սևակ, նշվ. երկր, էջ 264): «Շնորհակալ եմ քեզանից, իմ սի՛րտ, Որ կարողացար դու այսքան տարի Բարուն հավատալ ու [կարողացար] մնալ բարի, [կարողացար] Չարի դեմ լինել անողոք ու բիրտ» (Հ. Մահյան, նշվ. երկր, էջ 353): «Սկսել եմ կամաց-կամաց ինձ ճանաչել ու [սկսել եմ] հասկանալ, Սկսել եմ կամաց-կամաց դառնալ ներհուն, [սկսել եմ] դառնալ խոհուն» (Հ. Մահյան, նշվ. երկր, էջ 325): «Երբ փորձել են ջնջել ու [փորձել են] եղծանել, Կայծակին են տվել տառերը մեր» (Վ. Դավթյան, նշվ. երկր, հ. 1, էջ 210):

Ասվեց, որ բայական բաղադրյալ ստորոգյալի կազմում կարող է զեղչվել անորոշ դերբայը: Օրինակ՝ «-Նանի՛, վախեցի,- գանգատվում է նա Եվ ուզում է լալ, չի կարողանում [լալ]» (Հ. Թումանյան, նշվ. երկր, էջ 174): «Ինչքան ուզում է պոկել, Չի կարենում սակայն [պոկել]» (Վ. Դավթյան, նշվ. երկր, հ. 2, էջ 187):

Ստորոգյալի մասնակի զեղչման մի դրսևորումն էլ կապվում է հարկադրական պիտի/պետք է եղանակիչի հետ: Չեղչման ընդհանուր հիմունքներով բարդ համադասական նախադասության ստորոգյալներից մեկում կամ մյուսում (մյուսներում) կարող է այն զեղչվել: Օրինակ՝ «Էնտեղ... չիթ պետք է ծալեր, խանութը [պետք է] սրբեր, իսկ պարապ ժամանակը [պետք է] մուշտարի կանչեր» (Հ. Թումանյան, նշվ. երկր, էջ 269), «Գազանային ունակներով ինչքան էլ գան՝ պիտի լոկ Արագացնեն մահն իրենց սև-ու [պիտի] չքանան առհավետ» (Ե. Չարենց, նշվ. երկր, էջ 526): «Այնտեղ՝ արևոտ այն քարափներին Իմ մանկությունը պիտի դողանջեր, [պիտի] Թառեր Եփրատի փրփրած թևին Եվ ընկուզենու կատարից [պիտի] կանչեր» (Վ. Դավթյան, նշվ. երկր, հ. 1, էջ 30):

Պիտի/պետք է եղանակիչը կարող է կրկնվել բարդ նախադասության ամեն մի բաղադրիչում: Օրինակ՝ «Աշուղ Մայաթ-Նովի նման՝ ես երգ ու տաղ պիտի ասեմ, երգեմ պիտի գիշեր-ցերեկ-ու սրտի տաղ պիտի ասեմ» (Ե. Չարենց, նշվ. երկր, էջ 76): «Բախտիդ ճակատը պիտի համբուրես, Եվ շնորհակալ պիտի լինես դու... Որ հոգուդ վրա կնճիռներ չունես Եվ խղճիդ վրա չունես ոչ մի բիծ» (Հ. Մահյան, նշվ. երկր, էջ 428):

Նույն կերպով այն կարող է գործածվել ստորոգյալի կրկնորդում: Օրինակ՝ «Ինձ արցունք է տվել տերը, Ես պիտի լամ, պիտի լամ» (Հ. Թումանյան, նշվ. երկր, էջ 190):

Քանի որ ձևաբանորեն բաղադրյալ կազմություն ունի նաև արգելական հրամայականը (մի՛ գնա, մի՛ խոսեք), բարդ համադասական նախադասության 2-րդ (և հաջորդ) բաղադրիչ(ներ)ում կարող է զեղչվել մի՛ մասնիկը, և արդյունքում ունենում ենք ստորոգյալի մասնակի զեղչումով թերի նախադասություն: Օրինակ՝ «Համակրություն է հարկավոր բարի գործին, Եվ մաքրություն է հարկավոր միտք ու հոգու – Թեկուզ մտքո՛ւմ,

նույնիսկ հոգո՛վ լոկ կամեցեք – Եվ ... մի՛ քաշվեցեք, [մի՛] կարկամեցեք, Մո՛ն տ համեցեք...» (Պ. Սևակ, նշվ. երկր, էջ 398):

Պարզ ստորոգյալի մասնակի զեղչման մի յուրահատուկ դրսևորում է այն, որ հարադրավոր բայերի խոնարհված ձևերով կազմված ստորոգյալից բառային արտահայտությամբ մնում է միայն ոչ բայ բաղադրիչը, իսկ բայական բաղադրիչը լրիվ կամ մասնակիորեն զեղչվում է: Օրինակ՝ «Ո՞վ է մեղավոր... Միտք եմ անում, միտք [եմ անում] Ու չեմ հասկանում՝ ով է մեղավոր» (Հ. Թումանյան, նշվ. երկր, էջ 165): «Ծունկի եկ, ծունկի [եկ], Այս լեռներն անգամ թող ծունկի չոքեն... Փառաբանության խոսքերը ոգեն» (Վ. Դավթյան, նշվ. երկր, հ. 2, էջ 162): «Մեզ գգվում են միշտ գգվանքով մի սուտ, Մեզ խաչ են [հանում], խաչ են հանում ամեն օր» (Վ. Տերյան, նշվ. երկր, էջ 272): «Գիտի, թե... Ու՛ մ հետ դինջ նստած նարդի է խաղում, Հարկ եղած դեպքում և տանուլ [է] տալիս» (Պ. Սևակ, նշվ. երկր, էջ 176):

Ամփոփենք: Ստորոգյալի մասնակի զեղչումով թերի նախադասությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բազմապիսի ձևավորում ունեն ժամանակակից հայերենում: Ստորոգյալը համապատասխան կիրառական պայմաններում մասնակիորեն զեղչվում է, երբ ա) այն արտահայտվում է բայի խոնարհված վերլուծական բառաձևերով, բ) երբ այն, իբրև նախադասության կառուցվածքային բաղադրիչ, բաղադրյալ (վերլուծական) կազմություն ունի, գ) երբ այն որոշ հարադրական բայերի խոնարհված ձևերի յուրատիպ կիրառությամբ է հանդես գալիս:

ОБ ОДНОМ ПРОЯВЛЕНИИ НЕПОЛНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ՏՈՆԱ ՆԱԶԱՐԵՏՅԱՆ

Резюме

Неполные предложения формируются при полном или частичном опущении члена предложения. Частично опускаются (эллиптируются) и главные, и второстепенные члены предложения, наиболее часто – сказуемое, если оно выражается аналитической словоформой, или если оно составное сказуемое. В соответствующих условиях опускается компонент сказуемого *եմ* или *լինել* в роли вспомогательного глагола или связки. Из состава сказуемого могут опускаться также глаголы *թվալ*, *դառնալ* и др., употребляемые в роли связки. Иногда опускается предикатив. Сказуемое бывает частично эллиптированным, если опускается личная модальная либо фазовая часть составного глагольного сказуемого или основная часть – инфинитив. Сказуемое бывает частично эллиптированным и в том случае, если опускается модальная частица *պիտի*// *պետք է*, отрицательная частица повелительного наклонения *մի՛* или компонент *ուսլ* в аналитических каузативных глаголах.

ON A SPECIFIC CASE OF INCOMPLETE SENTENCES
IN MODERN ARMENIAN

SONA NAZARETYAN

S u m m a r y

The incomplete sentences emerge both through complete or partial contraction of a member of the sentence. Both the primary and secondary members of sentences may undergo partial omission or contraction. Predicates undergo contraction much more frequently. Predicate is much more likely to be omitted if it contains an analytical component or due to its compound character. In appropriate contexts of usage the components *և՛* or *լինել*, used as auxiliary or link verbs, are omitted. Other components as well may be omitted in the predicate given (e.g.: *թվալ* (Engl. seem), *դառնալ* (Engl. get or become), etc.). Sometimes the predicative may also undergo contractions. Predicate may undergo a partial omission if either conjugated modal or aspectual verbal component or infinitive of a verb is omitted. Predicate undergoes partial contraction if the modal constituent *պիտի/պետք է* (Engl. must) or the negative imperative particle *մի՛* or the causative verbal component *տալ* are exposed to omission.